

զբատան, թէ Նընդստանու էր դալիս, մեր տանը իջաւ: Վահմետականաց մօտ արդիշ լած էր մեզ նորա հետը հաղորդակցութիւն անելը, հետի կնառի, ջոկ հաց ջոկ ամանում՝ կտային նրան և նրա ամանովը ջուր չենք խմել, իբր անսուրը է. բայց երբ մէք ու մէք կլինելիք, միասին հաց էլ կուտի, ջինի էլ կրխմիք հացի վրայ՝ մանաւանդ գիշերները: Առ շատ աշխատեց, յորդորեց հօրս, որ ընտանիքով զրնայ Թ.ի.ֆլիլ: Բայց անկարելի էր, որպէս հայրս խօսում էր նրա հետը, նախ հեռաւորութեան, երկրորդ էն խառն ժամանակի համար, որ մին քաղաքի կամ զիւղի զրլիստորը միւսներին չէր հնազանդվում, ամենայն տեղ մին մին ինքնազլուխ տիրապետող էր լոյս ընկած: Ի՞ոլոր Պարսկաստոնը երերման մէջն էր: Սա կապատմէր, որ պասիս ազգականներն Թ.ի.ֆլիլ մէծ անուան, հարըստութեան, կալուածոյ և փառքի տէրեր են:

«Արանից յետը մին Եսպիսկոպոս ևս եկաւ դնաց Հաղիստան երբ և հայրս Շիրազ չէր: Ես Եսպիսկոպոն իջաւ Հայոց եկեղեցւոյ խցերումն, — ամենայն զիշեր մին տանիցը նորա համար ծածուկ կերակուր՝ քաղցրեղէն կը տանէին, և մին զիշեր էլ մայրս ինձ ուղարկեց նորա աջը համբուրելոյ՝ — սա օրհնեց և մին Վասունք կախեց շըլնքէս ու ասաց, որդի՛ թէ էս միշտ ճտիցդ քաշտուած պահես, երբէք քեզ պատերազմումը հրացանի կամ թնդանօղի վնտակ չի վեպէլ ինչ նեղութեան և վշտութեան մջ ընկնիս, թէ ջերմուանդ հաւատով յուսաս, աղօթես, էս Վասունքի զօրութեամբ անպատճառ կաղատիս:

«Վիայնակեացն էս ասեց ու շատիկի տակիցը, որ ճտիցը քաշ էր տրած մին կեղ-

տոտ կտաւով էն Վասունքը, հանեց ինձ ցոյց տուաւ, և ստիպէց համբուրեմ: Ես հա, որդի՛, կրկնեց, որդի՛ էս է էն Վասունքը, որ մինչեւ ցայսօր ունիմ և փորձած եմ շատ անգամ՝ ես հաւատուրաց, ես հաւատադրումս պատերազմների մէջ և նեղութեանց պատահիլիս՝ յիշած ու աղաւինած սրան՝ աղասուած եմ սորազօրութեամբը:

(Ե-Ր-Ա-Ն-Ա-Ք-Լ-Ւ)

ԳԱԼՈՒԽ ԵՒՐՄԱԶԱՆՆԵՐ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Զմեռնի Գաղղիա. — Արուկսահանդկում Գաղղիոյ 14878 ի. — Հայք ի նոյն արուկսահանդիսի. — Բարեկարգութիւնն և նախանձախներութիւնն Համրապիտորիան. — Հոռվիմկադաւան եկեղեցականութեամ դաւարութիւնն. — Հայոց և հռովմկականաց դպրոցաց մէջ եղած սարքերութիւնն. — Ազատ ուսումնարաններ և Պապականաց Համալսարաններ. — Համալսարանական տարեկարգ. — Խրախոյ և կարդիմադուրիւն. — Ռսկեայ տապան յանուն և ի նույն պապի. — Պապական կղերականաց բշնամի. — Եկեղեցականաց ամուսնութեան հարց. — Նույրի ի նպատ համալսարանաց պապականաց. — Հայոց համար:

Այս տարի զարմանալի ձմեռ է Փրանսիայում և մանաւանդ Փարիզում, ամբողջ Յունվարը անցաւ և Փետրվարը արդին վերջանում է, և այստեղ զեռ ձիւն չէ եկած: Փարիզում եղանակը շատ ասք է, և ըստ հարիւրաստիճաննեայ ջերմաշափի տասը աստիճանից չէ պակասում: Ճառերը և բոյսերը պարտէ զներում արդին կանչեցան, ցորեանը և բանջարեղէնները

բողբոջել են դաշտերում։ Այսպիսի ձմեռը շատերին և մանաւանդ երկրագործներին երկիւղ է պատճառում երկրի յաջող արդիւնաբերութեան զեմ և այդ երկիւղը առանց ուշադրութեան չմնաց զիտականների կողմից։ Փարիզի Մանսուրի օդաքննական դիտանոցի վերատեսուչը, երեկի գիտական Դալին, այս առթիւքնել է որ՝ 1735, 1736, 1737, 1806, 1819, 1821, 1829, 1833, 1837, 1842, և 1846 թուականներում Յունվար ամիսը համարեա բոլորովին նման է եղել ներկայ տարու Յունվարին, բայց այդ թուականները ոչ թէ չեն եղել չորային կամ ապարդիւն, այլ ընդհակառակն նոցանից շատերը նշանաւոր են եղել երկրի բերքերի առատութեամբ։ Այս զիտական տեղեկութիւնները, որք տպուեցան զրեթէ բուր մեծ և մանր լրագիրներում, բաւական հանգստացրին երկրագործ ժողովուրդը։

Փարիզի առօրեայ զիտաւոր խնդիրներից մին է անշուշտ առաջեկայ Աշխարհահանդեսը։ Աորա վերայ խօսում է ժողովուրդը, լրագիրները անդադար հազորդում են այլեայլ աեղեկութիւններ, և վերջապէս զարմանալի ջանքով և մեծամեծ ծախքերով կատարվում են ահազին շնութիւնների պատրաստութիւններ խիստ ընդարձակ աեղի վերայ Փարիզի լաւագոյն մասնում։ Լրագիրներից երեսում է որ միայն Ֆրանսիայից եղած են արդէն 23 հազար առաջարկութիւններ Աշխարհահանդիսին մասնակցերու համար, բայց կարծում են որ այդ թիւը կհասնի մինչեւ 30 հազարին։ Միայն ինքն Փարիզը արել է 8 հազար առաջարկութիւն։ Խւրոպայի համարեա բոլոր տերութիւնները արդէն

յայտնել են իւրեանց ցանկութիւնը մասնակցել Աշխարհահանդիսին, և մինչեւ անգամ Ամերիկան, Չինասաանը, Ճապոնիան շտապում են մասնակցել սորան։ Բայց Փարիզի Աշխարհահանդեսը գուցէ շուտով կղառնայ քաղաքական մի կրնառուտ ինդիր։ Ի՞սմարդը, որին Խւրոպական լրագիրները տալիս են Խշտան մականունը, չքաւականանալով Պրանկիո — Գերմանական պատերազմի յաղթութեան փառքով, կամեցաւ բոլորովին ոչնչացնել և աղքատացնել Պրանսիան, ուստի խելով երկու խիստ ընդարձակ նահանգներ միմինաւոր ժողովրդով՝ պահանջնեց նաև հինգ միլիարդ Պրանսկապատերազմական տուղանք։ Բայց հանձարեղ քաղաքագէտը սաստիկ սխալուեցաւ։ Պրանսիան ժամանակակից առաջ վճարեց այդ սարսափելի տուղանքը շնորհիւ իւր զարմանալի աղքատական ջերմեռանդութեան, իսկ Գերմանիան ոչ միայն չհարստացաւ, ոչ միայն օգուտ չստացաւ, այլ ընդհակառակն շատ վնասուեցաւ և բոլորովին աղքատացաւ։ Գերմանիայի արուեստագործական արտադրութիւնը այն աստիճան անկած է, որ՝ զործարանների և արուեստանոցների մեծազոյն մասն խափանուած է։ Ուստի երբ Գերմանիայի երեսփոխանական ժողովում առաջարկութիւն եղաւ տերութեան՝ մասնակցել Փարիզի Աշխարհահանդիսին, Ի՞սմարկը բոլորովին մերժեց այդ առաջարկութիւնը և վճուց որ Գերմանիան ամենեին չի մասնակցի նորան։ Դորանով նա կամեցաւ արհամարհել Պրանսիայի յառաջադիմութիւնը, բայց ընդհակառակն հաստատեց Գերմանիայի յետադիմութիւնը և անկումն։ Այս առթիւ Պրուսիայի և

ամբողջ միացեալ Գիրմանիայի առաջա-  
ւոր մարդիկ խիստ դժգոհ են Իշխամարկից:  
Բայց նա կամենալով աւելի մեծ հարուած  
տալ Փրանսիային, աշխատում է յորդո-  
րել որ նաև միւս տէրութիւնները չմաս-  
նակցին Եշխարհահանդէսին և կարողա-  
ցաւ կուսակից գտնել միայն թոյը Աւստ-  
րիան, որը թէև սկզբում համաձայն  
դտանուեցաւ Իշխամարկի հետ, բայց յետոյ  
ազգային երեսփոխանական ժողովի պա-  
հանջով ստիպուած՝ որոշեց մասնակցել  
և նշանակեց 600 հազար գուղդէն հարկա-  
ւոց ծախուց համար:

Բաց ի իւր ընդհանուր նշանակութիւնից, ևս խօսում եմ և կիսում այսուհետեւ. Փարիզի Աշխարհահանդիսի վերայ այն նպատակով՝ որ զբաւեմ մեր հայրենակիցների ուշաղրութիւնը։ Թէ՛ Առուսաստանի և թէ՛ Տաճկաստանի Հայերը իհարկէ չներարող մաքառել Եւրոպացիների հետ արուեստագործական արտադրութեան առարկաների մէջ, բայց կարող են մասնակցել իւրեանց հայրենիքի տեղական բերքերով. սորա համար զեռ ժամանակ կայ, որովհետեւ Աշխարհահանդէսը կրացուի առաջիկայ 1878 թուականի Մայիսին:

Փարիզի Աշխարհահանդէսը միակ առաջոյց չէ թէ ինչպէս Պրանտիան, այս քաղաքական սարսափելի ալեկոծութեան ժամանակ, չմնուանալով արտաքին քաղաքական ծանրակշիռ խնդիրները և ձգտերով մեծ զեր խաղալ Աւրոպայի քաղաքական ասպարիզի վերայ, զարմանալի ուշադրութեամբ և աչալըջութեամբ զբաղուած է իւր ներքին գործերով: Աղջային երեսափոխանական ժողովում և բարձրագոյն Պա-

լատում ( Անաթ ) ամենայն օր քննվում  
են նորանոր օրէնքներ և ասվում են հիա-  
նալի ձառեր ազգային ներքին բարեկարգու-  
թեան և ժողովրդի բարեկեցութեան մասին;  
Կերպար հասարակապետական կառավարու-  
թիւնը սակաւ չէ զբաղուած նաև իւր բազ-  
մաթիւ թշնամիներու հետ մաքառելով:  
Առցա մէջ նշանաւոր և վտանգաւոր դերը  
պատկանում է հռովմէադաւան կղերական  
խմբին: Ամբողջ Ֆրանսիայի և մանաւանդ  
Փարիզի եկեղեցականք շատ ընդդէմ են  
հասարակապետութեան, որովհետեւ սա-  
ւելի՛ քան թէ միւս տեսակ վարչութիւ-  
նը, զօ թագաւորութիւնը կամ կայսե-  
րութիւնը, խափանում է նոցա ցանկու-  
թիւնը մատը խառնել ամեն բանի մէջ,  
այս ինքն ունենալ զիսաւոր ազգեցութիւն  
ժողովրդի կեանքի քաղաքական և այլ տե-  
սակ կողմերի վերայ: Քահանաները, և  
մինչև անգամ եպիսկոպոսները, եկեղեցում  
ուսումնարանում, համալսարանում, որե-  
իցէ ժողովարանում, շտապում են կամ  
ուղղակի և բացարձակապէս, կամ կողմնակի  
և մուժ ոճերով քարեր զլորել հասարա-  
կապետութեան և հասարակապետական-  
ների վերայ: Կեկեղեցական դասի զիսաւոր  
զէնքը, բաց ի ուրիշ շատերից, է ուսում-  
նարանը, որով այդ դասը յաջողութեամբ  
կարողանում է շարունակել իւր ազգեցու-  
թիւնը ժողովրդի վերայ: Բայց որպիսի  
մեծ տարբերութիւն կայ սոցա դպրոցների  
և զօ մեր եկեղեցական դպրոցների մէջ:  
Մինչզեռ մեր դպրոցները բոլորովին բաց են  
ժողովրդի համար, ինքն ժողովուրդն է նո-  
ցա մերձաւոր աէրը, պահպանողը և կա-  
ռավարողը, տեսուչները և ուսուցիչները  
աշխարհական են, աշտկերտները երթեեկի

սոցառումնարանները ընդհակառակին բոլորովին փակ են և ձանկած մոլովովի աչքից, նոցա մերձաւոր տէրերը կամ առանձին հոգեորական անձնութ են և կամ եկեղեցական հաստատութիւնք, տեսուչները և կառավարիչները, մինչեւ անդամ ուսուցիչների նշանաւոր մասը, նոյնպէս հոգեօրական են, իսկ աշակերտաները բատ մեծի մասին զիշերօթիկ: Մինչդեռ մեր մանուկների մասուոր և հոգեկան ոյժերը դարդանում են՝ ելթէ ոչ մանկավարժական օրինքներով, դժոխա բոլորովին ազատ որ և ից, կը բական կամ աւելի ծիշար՝ այլօտար կուսակցական ազգեցութիւնից, ոսցա ուսումնարաններում ընդհակառակին մանուկների բոլոր հոգեկան և մոտաւոր ոյժերը ջարդվում են, փշրվում են երկաթի մանկանաներով — կը բական — պապան ոգեով, որը պատրաստում է, նոցա լինել անպատճառ կրօնամոլ կաթոլիկ, եկեղեցական արտաքին ծեսերի և ձևերի սարուկ և ողաշտող, եկեղեցական դասին կոյր հնազանդ՝ հպատակ և ջերմ սպաշտպան, և ատող և ընդդիմացող այն ամենայն հաստատութեանց և ուղղութեանց, որք հակառակ են պապագաւան ևն եկեղեցական դասին:

Աղերական խումբը դեռևս այնչափ հըզոր է, այստեղ՝ որ նորան՝ ինչպէս յայտնի է, յաջողեցաւ 1875 թուին նոր օրէնք հաստատել տալ ազատ ուսումնարանների մասին, որով եկեղեցական դասը իրաւունք ստացաւ աւելի ազատօրէն պահել իւր սեփական ուսումնարաններ տմենայն դասակարգի, մինչեւ անդամ համալսարաններ: Հոգեօրականները շտապեցին բանալիսկոյն Փարիզում կաթոլիկ համալսարան,

բայց իրրենոր հաստատութիւն՝ սա գեռ ևս թերուիատար զրութեան մէջ է, նոյն իսկ տունը, և մանաւանդ լսարանները, աւելի նման են միջնակարգ ուսումնարանին, քան թէ համալսարանին: Զարմանալին այս որ սոյն կաթոլիկ համալսարանը ունի լեզուալիտական, իրաւարանական և բնագիտական բաժիններ, և չունի ամենեւին աստուածարանական բաժին: Աորա լատանուր այն է, որ՝ հնադարեան և հրոշակաւոր Աորբոնի համալսարանի (Փարիզում) աստուածարանական բաժինը հոգեւորականների ձեռքին է: Պէտք է աւելացնել որ աստուածարանական զիտութիւնները վաղուց դարձել են Ֆրանսիայում մի առանձին մասնագիտութիւն հոգեւորականների, և աշխարհականները նոցա չեն սիրում, չեն ուսանում, ուստի նորա աւելի նուազ կերպով մշակուած են Ֆրանսիայում՝ քան թէ Պերմանիայում և մինչեւ անդամ Անգլիայում: Մինչդեռ Աորբոնի միւս բաժինների լսարանները միշտ լի են բազմաթիւ երիտասարդներով, ընդհակառակին աստուածարանական բաժնի լսարանը կամ բոլորովին դատարկ է՝ ելթէ մեծ բան չհամարել հինգ — տասը հոգին, և կամ փոքր իշատէ ծարտար հոգեւորականի դասին հաւաքվում են ծեր և ալեզարդ մարդիկ, որք որոնում են աւելի հոգեշահ զրազմունք՝ քան թէ զիտութիւն: Բայց կարելի է ներկայացնել այդպիսի ճարտար ուսուցչի զրութիւնը, երբ նորա ծերուկ ուսանողները, որոց մէջ լինում են նաև ծեր քահանաներ, բատ մեծի մասին փոխանակ լսելու՝ քնում են փառաւոր կերպով, հանաք չկարծէք, քնում են իսկապէս, կարծես թէ դորա համար լինին եկած:

Այսին իսկ կաթողիկ համալսարանը մեծ համակրութիւն չէ գտնում մինչև անգամ կղերական աշխարհականների կողմից, և իւրաքանչիւր բամբում կան հաղիւ տառը — քանի լողներ, թէ և սոքա բատ մեծի մասին երիտասարդներ են, բայց նոքա որոնող են թեթև ճանապարհով զիտնական վկայականների։ Այս համալսարանի ուսուցիչները թէպէտ մեծաղյն մասնով աշխարհական անձինք են, բայց չնայնքան համբաւաւոր զիտնական շրջանի մեջ և ըստ մեծի մասին իրրե ծեր և ալեզարդ մարդիկ հնացած են և յետաժնայ զիտութեան յառաջաղիմութեան ճանապարհի վերայ։ Եայց սորա աւելի վեսասակար կողմը այն է որ՝ ուսուցիչները, ոմանք համզմամք և ոմանք ստիպմամբ, բացատրում են կրօնական հայեացքով բոլոր արտաքին պարզ երեսյթները, մինչև անդամ բնական զիտութեան զանազան ձիւղերի պարզ և բնական երեսյթները, տալով այդպէս ուսանողներին սխալ և յեղաշրջեալ տեղեկութիւններ։

Յունփարի 26 ին հանդիսաւոր կերպով կատարուեցաւ սոյն համալսարանի հաստատութեան տարեղարձի տօնախմբութիւնը. ինքն Փարիզի կարդինալ — արքեպիսկոպոսը նախազահութիւն արեց հանդիսաւոր ժողովին, որուն մասնակից էին մօտ հազար հոգի և ուր ներկայ էին նաև շատ քահանաներ, մինչև անդամ Ազգային երեսփոխանական ժողովի և Աննաթի մի քանի անդամներ՝ իրրե կուսակիցք կը զիրական խմբի։ Համալսարանի վերատեսուք կարդաց մի ճառ — հաշիւ յառաջաղիմութեան և անտեսական կառավարութեան. ապա եղան մի քանի ճառախօսու-

թիւններ, իսկ հանդիսի վերջում արքեպիսկոպոսը համառօտ ճառով բարեմաղթեց համալսարանին արագաքայլ յառաջաղիմութիւն և ապահովութիւն թշնամեաց որոգայթներից, իրախուսեց հանդիսականները համակրել և օժանդակել համալսարանին՝ և որշնեց հաւատացեալ կաթոլիկները, ինքելով իւր խօսքը համառօտ աղօթքով։

Գրանսիայի հողեորականները անդադար իրախուսանքներ են ստանում և ռողմի պապից, նու մտադիր է շուտով կարդինալութիւն տալ նաև երկու գաւառական առաջնորդ եպիսկոպոսներին։ Փարիզի հողեորականները զարմանալի կերպով պաշտպանում են իւրեանց պապին\*), ամենայն յարմար և անյարմար զիսպուածում խօսում են պապի վերայ և պաշտպանում են նորա իրաւունքները։ Այսքան մեծ է պապին համակրող խումբը Փարիզում՝ որ՝ այստեղ պատրաստեցին նորա համար մի թանգաղին ընծայ։ Այդ է մի ոսկի արկրող կամ տապան ներքին բազմաթիւ բաժնմունքներով, որոց մեջ պիտի պահպին, իւրաքանչիւրում մի հատ, ամեն լի-

(\*) Իսկ մը առաջ էր առաջ և առաջ կղինուիմք մեր Գլուխ՝ մեր հարազատ Պետրի գէմ։ Արգեօք կը կարմիթմք։

Տնայելով որ մեր եկեղեցին պապական զրութիւն և փառամղութիւն չունի և մեր Եկեղեցւց Գլուխները մի և նոյն Ազգի և Եկեղեցւց հարազատ որդի և Պետր լինելով՝ մի միայն նորա օգտին համար կաշխատին, բայց կան դիմակաւորներ՝ որ տարբեր զցներ տալ կծնին և խորութիւններ ձեւ կաշխատին. չիմք յիշեր մեր եկեղեցւց պիտի գէմ այդպիսեաց հնարած և լարած որոգայթները

զուով թարգմանած օրինակները պապի այն կոնդակի, որով հաստատվում է թէ Եստուածածինը յղացաւ իւր մօր՝ Ենայի՝ արգանդի մէջ անարատապէս, առանց մարգիկային յարաբերութեան։ Յայսնի է որ՝ ոչ մեր եկեղեցին և ոչ Յունաց եկեղեցին չէ ընդունում այսպիսի վարդապետութիւն՝ չունենալով առ այն Ա. Գրոց վկայութիւնը և լւ։ Ուկի տապանի վերին երեսի վերաց ձուլած է փոքր զիբքով « Առուրդեան կուսի » արձանը, իսկ մնացեալ երեսների (կողքերի) վերաց զրուած են բազմաթիւ նուիրատուների անունները, որոց մէջ առաջին տեղը պատկանում է Գրանսիայի նախագահ Մարտաջախտ Մակ - Մահոնի ինոջ անուանը, որը սոյն տապանի հանգանակութեան համար նուիրել է 10000 ֆրանկ։ Տողը առաջանար արժէ 80000 ֆրանկ։

Եթէ կղերական խումբը և մանաւանդ հոգեորականները թշնամի են հասարակապետութեան, նոքա ինքեանք աւելի շատ թշնամիներ ունին ամենայն դասակարգի մէջ։ Մօտ ժամանակներումն հանճարեղ հեղինակ Կաստանեարին հրատարակեց Փարիզում՝ մի զիբք այսպիսի վերնազրով, « ԺԵՆՆԵԿԱՐ Ֆրանսիայի օբխնիք առջև »։ որոյ մէջ սաստիկ հարուածուած են ժեղուինները։ Եյս զիբքի նշանակութիւնը ցոյց տալու համար բաւական է ասել՝ որ առաջին տպագրութեան մի քանի հազար օրինակը վաճառուեցան չըստ օրուած և արդին երեեցաւ երկրորդ հրատարակութիւնը։ Եւ որովհետեւ եկեղեցական դասը բաց ի քաղաքական և հասարակական վեսաներից, հասուցանում է Գրանսիային նաև շատ բարոյական և ընտանեկան մնաներ, որոց ապացոյց են բազմաթիւ քրեական

դատաքննութիւնները անառակի յանցաւորութեանց մասին, ուստի ազմագուշական խըմը ըին պարագութիւններից մէկը, Առասպայլը առաջարկեց երեսփոխանական ժողովին մի ծրագիր նոր օրէնքի, որով պահանջում է թոյլ տալ եկեղեցականներին ամուսնութիւն \*):

Չնայելով որ Փարիզի կաթոլիկ համալսարանը աւելի յաջողակ չէ զնում, հոգեորականները չեն յուսահատվում և աշխատում են նաև բոլոր խոշոր գաւառական քաղաքներում բանալ կաթոլիկ համալսարաններ, որպիսի նպատակով ժողովում են աշազին գումարներ։ Արժանի է մեծ ուշադրութեան որ՝ կաթոլիկ հոգեւորականները, լինելով ընդհանրապէս շատագահ և շահամոլ, զարմանալի առատաձեռնութեամբ նուիրում են համալսարաններ բանալու համար մեծ մեծ գումարներ, 80000, 100000, 150000 ֆրանկներ (1 ֆր. այժմ 30 կոսէկի է)։ Փարիզի կաթոլիկ համալսարանի համար հաւաքուած է մինչև այժմ 1,528,474 ֆր. իսկ 8ուլուզի համալսարանի համար 380,555 ֆրանկ։

Տաճկաստանի յեղափոխութեանց պատճառով Եւրոպայի քաղաքական բեմի վերաց վերջապէս հանդիսացաւ և Հայոց ազգի անունը։ Ինչպէս յայտնի է, Եւրոպական լրազիրների մէջ անդազար հազրուում են զանազան տեղեկութիւններ Հայերի մասին։ . . .

Վ. Վ. Բ.

Ի. Փարիզ. — 1877.

(\*) Պապական եկեղեցին ամուսնացեալ եկեղեցականներ չունենալով, նոյնպէս Գաղղիոյ հըսովմէազաւան եկեղեցին զուրկ է ամուսնացեալ եկեղեցականներէ։